

տակն, յոր գրեալ էր, անկարելի է ումեք հակառակ
կալ քրիստոնէից՝ սակս գերեզմանատանց նոցին հակա-
ռակ օրինաց, յեւս ձէմաղիւ էվիէլ ամսոյ՝ ԿՊԿ (1613)։
Ի դատաստանիս յայսմիկ բարեոք ՚ի միտ առ դատաւորն
եւ ծանեաւ պարզապէս զիրաւունս քրիստոնէից, եւ ա-
գարակն սեփհական գերեզմանատուն նոցին, ապա ասէ՝
ցՅէյիս Սալէհ, ՚ի գիրս դատարանի եւ ՚ի տումարն արքու-
նի՝ զոր մատուցէր, շերելին իրաւունք քո. եւ չլինի յի-
շատակութիւն զագարակէն զայնմանէ։ Իսկ վկայութիւն
ներկայ եւ բացակայ քրիստոնէից յայտ առնեն զճշմարտու-
թիւն իրին, ուստի չէ օրէն առնուլ զիրաւունս նոցա եւ
տալ ձեզ, եւ մերժեաց զնա յատենէ իւրմէ։ Եւ վերստին
գրով հաստատեաց զգերեզմանատունն ՚ի ժառանգութիւն
քրիստոնէից, եւ ունայնացոյց զվէճս եւ զհակառակութիւնս
Յէյիս Սալէհի. ՚ի Բէճէպ ամսոյ, ԿՊԿ (1614)։ Այլազ-
գիք Սիոնի տեսեալ թէ չշահեցան ինչ ՚ի դատաստանէ
աստի, մանաւանդ թէ անարգեցան ՚ի դատաւորէն, կա-
մեցան թափել զցասումն բարկութեան իւրեանց ՚ի վերայ
Հայոց։ Քանզի պատրանօք առեալ հրովարտակ արքու-
նուստ. բռնացան ՚ի վերայ գերեզմանատան նոցին, կից
Ս. Փրկչի վանաց, որով նեղէին եւ չարչարէին զԳրիգոր
Պատրիարքն, մինչեւ անճարացեալ նորա. յայտ արար ըզ-
տառապանս իւր ՚ի Դուռն Արքունի, զի գերեզմանատու-
նըն, զոր պահանջէին բնակիչք Սիոնի, էր ընդ ժառան-
գութեամբ Հայոց, հաստատեալ վաւերական գրովք, յորս
ակնարկեալ էր դատաւոր քաղաքին։ Սակայն որդիք Յէյիս
Ահմէտ Տէճէնեայ ոչ ինչ համարեալ զայնս, հնարիւք հա-
նեալ էին հրովարտակ, թէ տեղին այն իցէ ՚ի սահմանս
կալուածոց հաւուն իւրեանց։ Թէպէտեւ յառաջագոյն ա-
ռեալ էին Հայք հրովարտակ վասն այսր. յորում պատուի-
րէր, թէ մինչչեւ ծանուցեալ իցէ դատաւորն զխնդիրն ՚ի
Դուռն, չհակառակիլ ումեք քրիստոնէից եւ յարուցանել
վէճս ՚ի վերայ նոցա։ Սակայն անսաստեալ սոցա հրամանին,
պէսպէս պատճառանօք յարուցանէին վէճս, արկանել զնո-
սա ՚ի տուգանս։ Տաղտկացեալ միաբանաց ՚ի զրկանաց եւ
՚ի նեղութեանց աստի, սկսան փախչիլ եւ թաղչիլ այսր եւ
անդր։ Յետ գրելոյ Գրիգորի զայս ամենայն անցս ՚ի Դու-